

ՎԵՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վ. Գ. Ազատյան

ԼԱՏԻՆ-ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԻ
ՔԻՄԻԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ*

Չնայած ուսու-հայերեն մի շարք բառարանների առկայությանը, միշտ էլ մեծ է եղել բարձրորակ ուսու-հայերեն բառարանների, մասնավորապես մասնագիտական բառարանների պահանջը:

Հրատարակի վրա եղած մի քանի մասնագիտական բառարանները (աշխատանքային, իրավաբանական, առևտրա-հաշվապահական, շինարարական կառուցվածքների, երկաթուղային, ռադիոական, բժշկական) հրատարակված են 1919—1931 թվականներին և բոլորովին չեն բավարարում մեր ուսումնական գործի ու կուլտուրական շինարարության տարազ աճող պահանջները ոչ միայն այն պատճառով, որ նրանք ընդգրկում են մի քանի մասնագիտությունների միայն և վաղուց սպառված են, այլև այն պատճառով, որ նրանք մեծ չափով հնացել են, ետ են մնացել մեծ տեղավոր առաջընթացող մեր կյանքից՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, տեխնիկայի, գիտության, կուլտուրայի, լեզվաշինարարության բնագավառներում վերջին տասնամյակների ընթացքում ձեռք բերված հսկայական նվաճումներին: Այդ պատճառով նոր, բարձրորակ բառարանների, այդ թվում մասնագիտականների, հրատարակումը հատուկացած հարց է և ամեն մի բարձրորակ բառարանի լույս տեսնելը, որպես կուլտուրական շինարարության կարևոր միջոցառում, բոլոր ամենայնի պետք է ողջունել:

Վերջին տարիների ընթացքում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան հրատարակել և հրատարակում է մի քանի բառարաններ, որոնցից երկուսը (պոլիտեխնիկականը և բժշկականը) մասնագիտական են:

Ներկա գրախոսականում մենք խոսելու ենք Մ. Արեղյանի, Լ. Հովհաննիսյանի և Ա. Տեր-Պողոսյանի «Լատին-ուսու-հայերեն բժշկական բառարան» քիմիական տերմինների կապակցությամբ:

Քննության շտաբնիցով այդ բառարանի համար քիմիական տերմիններին ընարություն հարցը, մենք հիմնականում կանդ կառնենք այդ բառարանում տեղ գտած քիմիական տերմինների և քիմիական տերմինաբանական մի շարք սխալների և թերությունների վրա:

1. Ամեն մի մասնագիտական (և ոչ միայն մասնագիտական) բառարան կազմելիս պետք է ղեկավարվել համաժամանակյալ նյութերի համար տերմիններ գործածելու կամ ստեղծելու միջոցներով, միասնական

* Լատին-ուսու-հայերեն բժշկական բառարան: Հայկական ՍՍՌ ԳԱ, Հրատարակչություն, Երևան, 1951:

սկզբունքով և ոչ թե նույն տիպի մի խումբ նյութեր անվանել մի կերպ, մի այլ խումբ՝ այլ կերպ: Գրախոսովոյ բառարանում բացակայում է տերմիններ գործածելու կամ ստեղծելու միօրինակությունը, միասնական սկզբունքը:

Օրինակներ՝

ա) Միևնույն տիպի թթուների անունները գրված են տարբեր ձևով, տարբեր վերջավորությամբ՝ ֆտորաջրածնական (էջ 22), բրոմաջրածնական (23) և ցիանաջրածնային (23), սուլֆուսալիցիլային (29), պիրոգալլան (29) թթուներ և այլն, իսկ որոշ դեպքերում նույնիսկ միևնույն թթվի անունը տարբեր էջերի վրա ունի տարբեր վերջավորություններ՝ քացախաթթվային (20) ու քացախաթթվական (239) և այլն:

Գանի որ կան մի շարք դեպքեր, երբ միևնույն էլեմենտը (օրինակ ծծումբը, ֆոսֆորը, ազոտը և այլն) գոյացնում է մեկից ավելի թթուներ, վերջիններիս անունները տարբերում են նրանց վերջավորությամբ՝ ծծմբական (H_2SO_4) և ծծմբային (H_2SO_3), ազոտական (HNO_3) ու ազոտային (HNO_2) թթուներ և այլն: Ուստի, միօրինակությունը պահպանելն անհրաժեշտ է ոչ միայն խառնաշփոթություն չմտցնելու, այլև թյուրիմացությունների տեղիք չտալու համար: Այն դեպքերում, երբ տվյալ էլեմենտը գոյացնում է միայն մի թթու (օրինակ՝ HCl , HBr , HCN և այլն), ինչպես և օրգանական թթուների դեպքում, թթուների անվան վերջավորությամբ համար պետք է ընդունել կամ «ային» կամ «ական» վերջավորությունը, քայք ոչ և՛ մեկը, և՛ մյուսը (գերադասելի է «ական»-ը):

բ) Մի շարք թթուների անունները բառարանում չունեն ական, -ային կամ (սխալ) -յան վերջավորությունները: Նրանք կազմված են արմատից և «թթու» բառից, միացած ա հոգակապով. օրինակներ՝ գլուտամինաթթու (22), լինոլաթթու (23), միլիտաինաթթու (29), տերեաթթու (22), ամինոբենզոյաթթու (20), գլիցերոֆոսֆորաթթու (21), իսկ մի շարք դեպքերում միևնույն թթվի անունը գրված է միաժամանակ երկու ձևով: Օրինակներ՝ քլորական թթու և քլորաթթու (22), կիտրոնական թթու և կիտրոնաթթու (22), մրջնական թթու և մրջնաթթու (22), ծծմբական թթու և ծծմբաթթու (23), յոդական թթու և յոդաթթու (23), ազոտական թթու և ազոտաթթու (22, 23) և այլն:

Այս դեպքերում ես խախտված է միասնականության սկզբունքը և, որ ավելի ցավալի է, լայն ասպարեզ է բացված շփոթությունների և թյուրիմացությունների համար:

Հայտնի է, որ ծծումբը, ազոտը և մի շարք այլ էլեմենտներ, ինչպես հիշատակվեց վերը, գոյացնում են մեկից ավելի թթուներ, որոնց համար բոլորի կողմից վաղուց գործածական են դարձել ական (ավելի բարձր օքսիդից գոյացած թթվի համար) և ային (ավելի ցածր օքսիդից գոյացածի համար) վերջավորություններով անուններ՝ ծծմբական և ծծմբային, ազոտական և ազոտային և այլն: Դրանց գործածելը ոչ մի շփոթություն չի առաջացնում: Սակայն դրանցից բացի մի նոր տերմինի գործածությունը՝ «ծծմբաթթու», «ազոտաթթու» և այլն, որն է առավելություն չունենալով հանդերձ, շփոթություն է առաջ բերում՝ սրն է «ծծմբաթթուն» — H_2SO_4 -ը՝ թե H_2SO_3 -ը, սրն է «ազոտաթթուն» HNO_3 -ը, թե HNO_2 -ը և այլն:

Չէ՞ որ երկու թթուների մեջ էլ կա համապատասխանարար S և N և երկուսն էլ իրավամբ կարող են «ծծմբաթթու» կամ «ազոտաթթու» կոչվել. բայց նրանք բոլորովին տարբեր թթուներ են: Ուրեմն այդ տերմինը չպե՞ք է դորձածել և պետք է պահպանել միայն «տիան» և «ային» վերջավորութիւնները նման թթուների համար, իսկ մնացած գեղգերում՝ միայն «տիան» վերջավորութիւնը:

Այն գեղգերում, երբ թթվի անունը բխում է որեւէ հայտնի նյութի անունից (օրինակ՝ կարագ, քաղցիւ, խնձոր, կիտրոն, սաթ, մրջյուն և այլն), միասնական ձևով կազմված անվան հետ կարելի է դորձածել նաև այդ նյութերի անվան արմատը + ա հոդակապը + «թթու» վերջավորութիւնը. օրինակներ՝ մրջնական թթու և մրջնաթթու, խնձորական թթու և խնձորաթթու և այլն:

դ) Որոշ գեղգերում թթուների կամ շաքարների անվան մասերը կազմված են հոդակապով, այլ գեղգերում՝ առանց հոդակապի, օրինակներ՝ ֆտորաջրածնական (22), բրոմաջրածնական (23) և ցիանաջրածնական, (առանց հոդակապի) (23) թթուներ, կաթնաշաքար (357) և եղեգնի շաքար (387), խաղողի շաքար (196): Բոլոր գեղգերում էլ պետք է դորձածել հոդակապը՝ «ցիանաջրածնական թթու», «խաղողաշաքար», «եղեգնաշաքար» և այլն:

զ) Մի շարք տերմինների մեջ միևնույն բաղադրիչ կամ ինքնուրույն բաղը գրված է տարբեր կերպ, ըստ որում նրանցից, իհարկե, միայն մեկն է ճիշտ: Օրինակներ՝ Benzonaphtholum — բենզոնաֆալ (77) և Betanaphtholum — բետանաֆալ (77), metan — մետան (272) և methan — մեթան (273), էթեր և էթեր (101) և այլն: Բերված օրինակների մեջ համապատասխանարար սխալ են առաջինները և ճիշտ՝ երկրորդները:

է) Քիմիական տեսակետից միանգամայն նույնանման հալոգենային միացութիւնների մի մասի անունները գրված են մի կերպ, մյուսներինն՝ այլ կերպ: Օրինակներ՝ бромистый — բրոմական (22), хлористый — քլորային (101):

Բացի միօրինակութիւնը պահպանելուց (քլորային, բրոմային և այլն), անհրաժեշտ էր այդ բառերի կողքին միաժամանակ համապատասխանարար ավելացնել «քլորիդ», «բրոմիդ», քանի որ, օրինակ, «хлористый калий», «бромистый натрий» — չի կարելի թարգմանել «քլորային կալիում», «բրոմային նատրիում», այլ՝ «կալիումի քլորիդ», «նատրիումի բրոմիդ» և այլն, առավել ևս, որ հեղինակները մի շարք գեղգերում հենց այդպես էլ վարվել են (գարձյալ խախտելով միօրինակութիւնը), օրինակ՝ «хлористый барий» ճիշտ կերպով թարգմանելով «բարիումի քլորիդ» (76), «хлористый кальций»՝ «կալցիումի քլորիդ» (85), «бромистый калий» — «կալիումի բրոմիդ» (239) և այլն:

զ) Ինչպես և թթուների գեղգերում, հաճախ աղերի անունները թարգմանված են տարբեր սկզբունքով կամ միաժամանակ գրված են երկու, երբեմն նաև երեք տարբեր ձևերով: Օրինակներ՝ бромистый литий — լիթիումի բրոմիդ և углекислый литий — ածխաթթվական լիթիում (256) փոխանակ՝ «լիթիումի կարբոնատ»-ի, «քլորական արծաթ» (սխալ) և «արծաթի քլորիդ» (55) (ճիշտ), «ցիանային կալիում» (սխալ) և «կալիումի

ցիանիդ» (239) (ճիշտ), «ածխածթթվական կալիում» (239) (սխալ) և «կալիումի կարբոնատ» (239) (ճիշտ) և այլն:

2. Միանգամայն սխալ են թարգմանված մի շարք տերմիններ: Օրինակներ՝ двухлористый — երկքլորաառ (78), двухбромистый — երկբրոմառ (77), двуиодистый — երկյոդառ (78): Հետևողական լինելու և միօրինակությունը պահպանելու դեպքում հեղինակները այդ տերմինները «хлористый — քլորային», «бромистый — բրոմային»-ի օրինակով պետք է գրեին՝ «երկքլորային» և «երկյոդային» և ոչ թե «երկքլորաառ», «երկբրոմառ», «երկյոդառ»: Այդ նյութերը ոչ թե «քլորաառ», «բրոմառ» և «յոդառ»-ներ են (իսկ երկքլորաառ, երկբրոմառ և երկյոդառ առնաառակ դյուրթյուն չունեն) (քլորատներ՝ կոչվում են HClO_3 թթվի աղերը, բրոմատներ՝ HBrO_3 թթվի և յոդատներ՝ HJO_3 թթվի աղերը), այլ երկքլորիդ — գիքլորիդ, երկբրոմիդ — գիբրոմիդ և երկյոդիդ — գիյոդիդ:

Сернокислая медь — ծծմրաթթվական պղինձ, պղնձի սուլֆիդ (!) (125) — փոխանակ «պղնձի սուլֆատ», «պղնձի արջասպ»-ի, իսկ ամենացավալին այն է, որ CuSO_4 -ը (сернокислая медь) հայերեն թարգմանություն երկրորդ ձևով («պղնձի սուլֆիդ») նույնացված է CuS -ի հետ, որոնք բոլորովին տարբեր նյութեր են: Бикарбонаты — երկկարբոնատներ (77), двууглекислый — երկածխածթթվական (77), փոխանակ «երկարբոնատներ»-ի, бензойнокислый висмут — բենզոյական բիմուսթ (79), алюминат меди — ալյումինական պղինձ (125), азотистокислый натрий — ազոտային նատրիում (294), азотнокислый натрий — ազոտային նատրիում, նատրիումի նիտրիտ (294) (երկու նյութերի համար էլ զործ է անվանվում «ազոտային» տերմինը, մինչդեռ մեկը NaNO_3 է, մյուսը՝ NaNO_2 , իսկ երկրորդ դեպքում NaNO_3 -ին առված է NaNO_2 -ի անունը: Առաջինը պետք էր կոչել «նատրիումի նիտրիտ», երկրորդը՝ «նատրիումի նիտրատ»: сернистокислый натрий (калий) — ծծմրային նատրիում (կալիում) (294, 239), այնինչ сернистокислый նշանակում է H_2SO_3 -ի անոնցյալ (այդ թթվի աղ), իսկ ծծմրային նատրիում (ճիշտ՝ նատրիումի սուլֆիդ) — նշանակում է Na_2S), ацетат таллия — ացետաթթվական թալիում (434), փոխանակ «քաղցածրածթթվական»-ի (այդ է ճիշտ՝ «թալիումի ացետատ»-ի), сернокислый эфир — (փոխանակ «серный эфир»-ի) ծծմրաթթվ(ուս)ային էթեր (29), озонирование — օզոնացում (322), (փոխանակ՝ «օզոնում»-ի), озонированный — օզոնով հագեցած, օզոնացված (322), (փոխանակ՝ «օզոնած»-ի), осажденный — նստած, սկսած (358)՝ (փոխանակ՝ «նստեցրած»-ի), холод — սառնություն, սառնացում (?) (33), окись ртути — օքսիդացած սնդիկ (212) (փոխանակ «սնդիկի օքսիդ»-ի), хлористый калий — քլորական կալիում, Բերթոլետյան աղ (239) (նույնացված են KCl -ը և KClO_3 -ը), формообразование — ձևավորում (288) (փոխանակ՝ «ձևագոյացում»-ի), тапրացում (438) (փոխանակ՝ «խառում»-ի), бензойный — կնդրուկային (77) (փոխանակ «բենզոյական»-ի, մանավանդ որ հեղինակներն այլ դեպքերում խոստովանում են «կնդրուկ» — արմատից՝ «ամինոբենզոլաթթու» (20), «բենզ-ամիդ», «բենզալդեհիդ», «բենզոլ (77) և այլն), пикриновая кислота — կարապոտական թթու-պիկրոնիտրական թթու (22), олеиновая кислота — յուղածրած (23) (կարելի է շփոթել կարապոթթվի հետ. պետք է թարգմանել

«օրինաբխ»), гипохлориды (պեղաք է լինի՝ гипохлориты) — ենթաբուրիդներ (219) և այլն:

Երկու տարրեր տերմիններ՝ азотный (73) և азотистый (29) թարգմանված են միևնույն կերպ՝ ազոտային: Միևնույն տերմինները տարրեր էջերի վրա թարգմանված են տարրեր կերպ՝ азотный — ազոտային (173) և азотная — ազոտական (23), бромистая — բրոմական (22) և бромистый — բրոմային (29), серноокислый — ծծմբաթթվական (34) և ծծմբաթթվային (100), углекислый — ածխաթթվական (85) և углекислая — ածխաթթվային (176), «Смола»-ն թարգմանված է և՛ «ձյութ», և՛ «կուպր» (347), vitis vinifera — խաղող (467) և այլն:

3. Միայն և՛ գրված բաղաձայնի տերմիններ, օրինակներ՝ адсорбция — ադսորպցիա, ներկլանում (28) («ներկլանում»-ը ևս սխալ է, քանի որ կլանումը կատարվում է ոչ թե ներսը, այլ մակերեսին), գիսլորամին (140), ալկալիկ (32), алкогалат (32), կենդ (226), նատրիումի յոդիտ (294), կալիումի յոդիտ (457), հիդրոքսիլ (215), ինդոքսիլ (229), ֆաուորաշրածնական թթու (22), двойное уродство — կրկնակի հրեշներ (279) (իսկ մի փոքր ցածր՝ тройное уродство — եռակի հրեշություններ (279): Բերթոլետյան աղ (239) (փոխանակ՝ «Բերտոլեի աղ»-ի), гипохлориды — հիպոքլորիդներ (219) և այլն:

4. Բառարանը ծանրաբեռնված է բաղաձայնի այնպիսի տերմիններով, որոնք ոչ միայն բժշկական չեն, այլև անգամ հեռավոր կերպով կապված չեն բժշկության հետ: Օրինակներ՝ колбаса (81, 172), таракан (7), бойня (81), кануста (82), репа (82), откос, скат (130), дело (135), детерминизм (137), экскаватор (167), галоп (188) геофизика (192), узда (199), идея (224), озеро (248), спектроскоп (402), статика (411), термодинамика (425), кинематика (241), кинетика (241), барограф, барометр, бароскоп (76), гальванометр, гальваноскоп (188), рукоятка (264), полимеризация (356), вулканизация (467), реостат (384), кошачье мурлыканье (185), гидромеханика (213), мальгузианство (268) և այլն:

5. Բառարանը զերծ չէ վրիպակներից: Օրինակներ՝ Acidum hadrobromicum (23), Alliaria — սխտորամայր (33) — չկա առաերենը. միևնույն էջի վրա Ferrum pomatum-ը բերված է երկու անգամ. հակառակ այբուբենական կարգին նախ գրված է Acidum hydrochloricum-ը, ապա Acidum hydrobromicum-ը (23) և այլն:

Մենք հարկ ենք համարում մի քանի խոսք ասել նաև քիմիական տերմինների թվին չպատկանող մի շարք այլ տերմինների մասին:

Զարմանք է առաջացնում «плод шиповника»-ն «մառորենու պտուղ» թարգմանելը (186, 126) (երբ մենք դրա համար ունենք «մասուր» տերմինը), «черника»-ն՝ «հավամբգի պտուղ» (186), «плод малины»-ն «ազնրվամորու պտուղ» (186), «тыква»-ն՝ «ղղմենի» (107), «лимонный плод»-ը՝ «լիմոնի պտուղ» (186) (այլ տեղ՝ «կիտրոն» (176) և այլն թարգմանելը:

Այս սկզբունքով զեկաձարվելով պեղաք է գրեցինք նաև «խնձորենու պտուղ», «տանձենու պտուղ» և այլն, և ոչ թե «խնձոր», «տանձ» և այլն: Клещ-ը թարգմանված է «ախար», (138), երբ մենք ունենք հայերեն «տիզ» բառը և այլն:

[illegible]